




ՅՈՒՂ. Ա. ՔԶ. ՄԿՐԵԱՆ

Հին գործիչ — դէմքերէն մէկն էր Մը-կրեան Յովն ա. քահանայ, Գ. Օսեան-ներու, իւթիւնեաններու օրերէ Յնացած՝ և որ անուն մ'ունի մեր քաղաքական պատ-մութեան մէջ:

Մահը, որ վեցուց այդ դէմքը՝ անգամ մ'ալ «պատկասելի» մակդիրով կոչեւ տուաւ Հայ մամուլին:

1831ին ծնած ի Պարտիզակ՝ 78, տա-րիններով կը հանգչի հիմայ իր հայրենեաց հողին տակ, թէպէտ իր գործալից կեանքը ի Պոլիս անցուցած էր:

Երիտասարդ հասակէն արդէն ցուցած է իր վրայ եղանակն կարողութիւն մը, տոկուն կամք մը. և այդ է որ այսօր իր անունը պատմական կը թողու ապագային, քաղաքական և գրական կամ բանասիրա-կան փորձունէութեամբ:

Յաւալիւն հղած է՝ որ Մկրեանի պաշ-տօնները արգելք եղած են իրեն բանա-սիրական գործեր հրապարակ հանելու. և նա աւելի բանասէր եղած է՝ քան ար-տադրող, այսինքն սիրող հայկական ու սումնասիրութեանց:

Այդ հետեանքով նա այսօր կը թողու մատենադարան մը՝ նոխացած ազգային գրոց հազուագիւտ հատորներով և նախ-նեաց ձեռագիրներով:

Մկրեան քհ. բաց ի ժողովրդականա-ցած «Աղօթագիրք» էն՝ ունի «կենսագրու-թիւն Մեսրոպ Պ. Թադիաղեան Երեւա-նեցւոյ» ուսումնասիրութիւնը, և «Եղե-րբգութիւն յօրհաս թակայ թադիա-ղեանց» ի հրատարակութիւնը. ու յօդուած-ներ՝ բաց ի թրքահայ Հանդէսներէ՝ նաև «Լուսայ» և «Արարատ» ի մէջ հրատա-րակուած:

ՆՈՐ ՀԱՆԴԵՍ՝ «ԱՐՕՐ»,

Ուրախութեամբ և մեծ հաճոյքով կ'ի-մանանք՝ թէ Ռուսահայ ծանօթ հրապա-րակագիր Համբարձում Սարգեւեան (Շա-հրեար) Նոր տարիով պիտի սկսի հրա-տարակել «Արօր» գրական ամսագիրը:

Կը փափագինք որ Ռուսակայ Ծանօթ գրական ղէմքերը երեան զան անոր մէջ՝ ճանչցուելու համար թրքահայ և արտա-սահմանի ազգակից գրասէրներէ:

Յաջողութիւն և կարողութիւն կը մաղ-թենք Մեծ. Հրատարակիչ խմբագրին:



Հ. Բ. Արարեան